

ԽՈՐԱՅԵԼ ՕՐՈՒ ԿՈՂՄԻՑ

ՊԵՏՐՈՍ 1-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ՆՈՐԱՀԱՅՏ ՔԱՐՏԵԶԸ

Հայտնի է, որ հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Իսրայել Օրին 1701 թ. հունիսին Մոսկվա էր գնացել՝ Ռուսաստանի օգնությունը հայաստանի թուրք-պարսկական լծից ազատագրելու մասին բանակցություններ վարելու նպատակով: 1703 թ. նոյեմբերի 15-ին Պետրոս 1-ին հրաժ իր նամակում նա հաղորդում է հայերի նկատմամբ պարսիկ ու թուրք տիրողների ճնշումների ուժեղացման մասին և ներկայացնում է Անդրկովկասի քարտեզը՝ Երկրի բնական դիրքի, քաղաքների ու ամրոցների մասին կոնկրետ պատկերացում տալու համար: Օրին խնդրում է օգնել միլիտանավոր վրացի և հայ բրիտանյաններին, «որոնք այժմ հեծում են անհավատների լծի տակ»¹ և անուղղակի բացահայտում քարտեզ ներկայացնելու նպատակը (պատկերացում տալ Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի քաղաքների ու ամրոցների մասին): «Արդ,— գրում է Իսրայել Օրին,— եթե աստված կրթեմադրի, որ Ձերդ մեծությունը մուտք գործի Ասիա (քանի որ լիովին ապավինում ենք, թե պետք է բարեմադրի), մինչև զետիկ խոշարհվելով՝ Ձերդ մեծությանն ևմ հանձնում մեր Երկրի զծագիրը, որի վրա կարելի է տեսնել, թե ինչպես ամբողջ պետության մեջ՝ Նրեանից բացի ոչ մի այլ ամրոց չկա: Երիցս Երանելի աստված թող բարեբախտություն տա Ձերդ մեծությանը և ուժ՝ Ձեր զորքերին, որպեսզի նրանք նվաճեն այս, այնժամ ողջ Հայաստանն ու Վրաստանը կհպատակեցենք Ձեզ»²:

Այսպես, բոլոր Իսրայել Օրինոված տեղեկության, 1703 թ. Պետրոս I-ին հանձնված է Եղև Անդրկովկասի ու հարևան երկրների ժամանակակից քարտեզը, որն անշուշտ քաղաքական ու զինական մեծ հետաքրքրություն պետք է ներկայացներ ոչ միայն որպես պատմական կարևորագույն փաստաթուղթ, այլև որպես ժամանակի աշխարհագրական պատկերացումների նյութականացած արտահայտություն:

Անցյալ տարի Մոսկվայի Հին Ակտերի արխիվում (Центральный Государственный Архив Древних Актов—ЦГАДА) աշխատելիս, № 192 խոնդում մենք գտանք Ի. Օրին կողմից Պետրոս I-ին հանձնված հիշյալ քարտեզը, որը կազմված է նույն թվականին (ամիս և ամսաթիվ չի նշված): Նախքան քարտեզի մասին խոսելը հարկ է զեթ փորձել ցույց տալ, թե պատմական ինչ իրադրության արդասիր էր այն, որոնք էին դրա հանդես գալու կոնկրետ շարժառիթները: Այդ հարցի լուսարանելուն օգնում են XVIII դ. սկզբին վերաբերող մի շարք փաստաթղթեր, որոնք հիմք են տալիս նաև մոտավորապես որոշելու քարտեզի հանդես գալու ժամանակը:

Ամենայն հավանականությամբ ուսական կառավարությունը 1703 թ. կեսերին ցանկություն է հայտնել, որ Ի. Օրին ներկայացնի Անդրկովկասի և Հայաստանի քարտեզը, որ զծագրվել է մի քանի ամսվա ընթացքում և ներկայացվել Իսրայել Օրին 1703 թ. նոյեմբերի 15 թվա-

¹ ЦГАДА, фонд «Сношения России с Арменией, дело 1701—1703 гг. № 3, л. 275—276, перевод — л. 278 об.-280, Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898 (հետագայում՝ Эзов), № 106 և № 107.

² «Аше убо благословит бог, дабы Величество Ваше вступил во Асию (якоже всекончено чаем, что будет благославити), вручаю с нижайшим поклоном Величеству Вашему чертежъ нашей страны, который мочно видети, что никакой иной крепости нет во всем государстве, кроме Эрвана; преблагий бог да подаст благодать Величеству Вашему и силы войскам Вашим, дабы завоевали сие, тогда все Армению и Грузинцов под Себе покорите» (Эзов, 4, 173).

էիր նամակի հետ միասին՝ Այդ հավանականությունը հաստատվում է նաև նրանով, որ նույն 1703 թ. կեսերին նմանօրինակ պահանջ է ներկայացվել նաև Մոսկվայում ապրող վրացական թագավոր Արշիլ Վախթանգովիչին՝ Ինչպես հայտնի է, Արշիլ Բ Վախթանգովիչը (1647—1713) ականավոր դրող, պատմաբան, իր ժամանակի պրոգրեսիվ քաղաքական գործիչ ու ջերմ հայրենասեր էր։ Կորցնելով իր թագավորական իշխանությունը, նա բազմիցս դիմել էր Սոսկովյան կառավարությանը՝ խնդրելով նրա հովանավորությունը։ 1699 թ. Արշիլն ապրում էր Մոսկվայում, մասնակցում վրացական ազատագրական շարժման կազմակերպման փորձերին, մոտ հարաբերությունների մեջ էր արքունի բարձր շրջանների հետ և կապեր ուներ նաև հայերի հետ։ Հայտնի է, որ Վրաստանի ազատագրության վերաբերյալ նա գրել է մի քանի դիմում-նամակներ։ Ավելորդ չենք համարում մեջբերել այդ դիմում-նամակներից մեկը, քանի որ այն բնութագրում է Անդրկովկասի վիճակը և քաջահայտում վրացական գործիչների անկեղծությունները, ինչպես և նշում է Արշիլից Վրաստանի բարոնի պահանջները փաստորեն։

1703 թ. հունիսի 13-ին դեսպանական գործերի պրեզիդենտ Ֆ. Ա. Դոլովինին ուղղված իր նամակում Արշիլը գրում է. «Տեր իմ բոլարին Ֆեոդոր Ալեքսեևիչ, Ձերդ ողորմածությանը ցանկանում եմ առողջություն, և թող ամենակարող աչքը երկար տարիներ բախտավոր պահպանի Ձեզ թշնամիների դեմ հաղթանակներում։

Մեր՝ Եկվորեներիս նկատմամբ Ձեր հեռակա բարեհաճության և քո սիրալիր գրության համար շնորհակալորեն զուլս եմ խոնարհում։

Իսկ որ սարերի վրա դայակներ ոչխարներ գտնել ուզելով՝ այնտեղի վայրերի հատկություններն եր ուզում իմանալ մեզանից, այս մասին այստեղ հակիրճ ձևով կհաղորդեմ։

Ընկած ծառը ամեն որ կարող է հափշտակելու՝ Մեր երկրները (աստծո թողովությամբ) երկու կողմից են հափշտակված. հակառակ իրենց կամքի՝ մի մասը պարսիկին՝ մյուս մասը սուլթանին են ծառայում։ Բայց ավելի հարուստ են ու ամրացված սուլթանի գրաված երկրները, որոնց անուններն են՝ Իմերեթ, Սամցխե, Սաաթարազո, Մենդրեկիա, Նուչնակա և Օդիս կամ Կոլխի, Գուրիա, Աբխազիա և Չիխուր։ Սամցխեում և Սաաթարազոյում բերդերին ու վայրերին տիրապետում է թուրքը, և պետերը (վոյեյովոդաները) այնտեղ թուրքեր են, իսկ մնացած բոլոր աստիճանի մարդիկ և դյուղափնիրը մեր ուղղափառ բրիտոնյաններն են, իսկ մյուսները՝ հայեր կամ հրեաներ։ Ով բույսի այս երկու երկրից, բոլոր վերահիշյալներում ոչ մի թուրք իշխան չկա, բոլորը ուղղափառներ են՝ բացի իմերեթական Քուլախիսից։ Իսկ Պարսկաստանին ենթակա են այժմ Քարթլին և Կախեթը, որոնց տիրում է Նիկոլայ Բավիգովը։ Մեր քաղաքներում (որոնք թուրքական լծի տակ են) բոլոր ծառայողները, արհեստավորներն ու առևտրականները՝ մահմեդական դառնալով, իրենց մոտ հրացան են պահում, և երբ տեղական պատերազմ (домашняя война — այսինքն միջֆեոդալական, տեղական կռիվներ — Վ. Ո.) է լինում, անխտիր կռվի են ելնում՝ հարյուրակա՞ն և ավելի մարդ, բայց արտաքին պատերազմի է դուրս գալիս նրանց կեսը և ավելի քիչ, իսկ մյուսները մնում են տանը՝ Քաղաքներն ու ամրոցները գտնվում են անմատչելի տեղերում՝ սկսած Կովկասյան լեռներից մինչև Կասպից ծովը, և ապա սարերի վրա՝ դժվարանցանելի վայրերում։ Նրանց մոտ հրազենը քիչ է, և այդ ընդունված էլ չէ, իսկ բարե պարիսպներ թեպետ և չկան, բայց ամեն մի տուն (фамилия) բնական ամրությունների վրա ստեղծել է իր համար կանոնավոր բերդեր, իսկ առավել ևս այժմ, երբ վախենալով թուրքերի կողմից հնարավոր ամենօրյա հարձակումից, պատասպարվելու համար՝ չափազանց ամրապնդել են նախկին համեմատությամբ։

Ով եթե մեր բրիտոնյա ինքնակալից իրենց թեկուզ թարմ շնչի (толького воздуха) օգնություն ստանային, բոլորին հայտնի է, որ երկու կողմից ի մի համախմբվելով՝ հավատի և իրենց հայրենիքի համար՝ երկուսի դեմ էլ կջանային կանգնել մինչև արյան վերջին կաթիլը։

Բայց այժմ ստիպված են ծառայել ոտքերին, քանի որ զուլս (զլիսավոր — Վ. Ո.) չունեն։

Ս, միայն թե ստոված ինձ ներավորություն տար բախտավորությամբ տեսնել Ձեր գեմքը՝ այնժամ կհաղորդեի այն, ինչը անպատեհ կլիներ շարակցել նամակին։

Կախատեմ նաև, ինչքան կարող եմ և հիշում եմ, բարոնիզմը գծագրելով ուղարկել Ձեզ։

Ձեր ծառայություն միշտ պատրաստ՝ ձերուկ Արշիլ Իրերացի»։

Իր այս գրության հետ Արշիլը Գոլովինին է ուղարկել Իմերեթիայից ստացված Ինդիմալի պատրիարքի նամակը, որում հայտնվում է, թե թուրք սուլթանը գայրացել է, լսելով իր կողմից նշանակված իշխանին սպանելու լուրը և պատժիչ գործեր է ուղարկել Իմերեթիա։

¹ ЦГАДА, фонд 110 (Сношения России с Грузией), дело 1703 г. № 2, л. 1—2.

Նամակի հետպրության մեջ Արշիլը Գուլիսինին խնդրում է ցարին հաղորդել, որ ինքը կարող է հավատարիմ մարդ ուղարկել Վրաստան՝ իրադրությանը հանգամանորեն տեղեկանալու և իրեն զեկուցելու համար, բայց առանց ցարի կամքի չի համարձակվում այդ անել¹։

Այսպիսով, Իսրայել Օրու գիմումները և Արշիլի հիշյալ նամակի բովանդակությունը ինչպես և կողմերի միջև վարվող բանակցությունների վերաբերյալ նյութերը լիովին պարզ են դարձնում այն, որ Պետրոս Մեծի կառավարությունը Հայաստանին և Վրաստանին անմիջական ռազմական օգնություն ցույց տալուց սկզբունքորեն չէր հրաժարվում և ուսումնասիրում էր Պարսկաստանում, Թուրքիայում և Անդրկովկասում ստեղծված կոնկրետ իրադրությունը։

Ցար Արշիլը, վրաց պատրիարքը, ինչպես և Ի. Օրին ու հայ ազագանին համանման զնահատական էին տալիս Անդրկովկասում 1703 թ. ստեղծված իրադրությանը, շեշտում էին սպառնացող վտանգի մեծությունը և միաժամանակ նշում, որ փոքրաթիվ ռուս զորքերն անգամ կարող կլինեն վճռական ազդեցություն ունենալ Անդրկովկասի ազատագրության գործում, ոտքի հանել հայերին ու վրացիներին և միատեղ ուժերով տապալել օտար լուծը։

Ռուսական արքունիքը մեծ ուշադրությամբ ունկնդրում էր հայ ու վրաց գործիչների ծայնին, բայց ինչ-որ անվստահություն էր տածում առաջարկվող ծրագրերի ռեալության նկատմամբ և աշխատում էր ավելի մոտիկից ու հանգամանորեն ծանոթանալ ենթադրվող արևելյան արշավանքի ռազմա-քաղաքական ու նյութա-տեխնիկական պայմաններին և անմիջական հնարավորություններին։ Այդ նպատակով կազմակերպվում էին հանդիպումներ Ի. Օրու և Մինաս Վարդապետի հետ, այդ նպատակով Հայաստան ուղարկվեցին Միրոն Վասիլեր, Էույն նպատակով Ֆ. Ա. Գուլիսինը Արշիլից պահանջում էր Վրաստանի բարտեզը, որը ներկայացնել Արշիլը խոստանում էր 1703 թ. կեսերին գրած իր նամակում։

Եթե Հյուսիսային պատերազմի հոգևերով կլանված ռուսական կառավարությունը նշում էր Անդրկովկասին անմիջական ռազմական օգնություն հասցնելու անհնարինությունը, ապա հայ ու վրաց ազատագրական շարժման գործիչները, ընդհակառակը, պնդում էին ռուսական արշավանքի անհրաժեշտությունը, շտապեցնում էին՝ հավատացնելով, որ պարսկական արշավանքը հնարավոր է անգամ Հյուսիսային պատերազմին զուգընթաց, շեշտելով, որ ստեղծված բայինպաետ պայմանները կարող են տեղի տալ ավելի զգալի իրադրության՝ Վրաց և հայ գործիչները համոզում էին ռուս գործիչներին՝ օգտվել շատ հարմար մոմենտից և կանխել Պարսկաստանի ռազմական ուժերի կենտրոնացման և բերդերի կառուցման վտանգը, կանխել Թուրքական հարձակման վտանգը, մի բան, որ կարող է ճակատագրական նշանակություն ունենալ դեպքերի հետագա զարգացման համար։ Այդ մասին էին գրում հայ մելիքները Պետրոս 1-ին, ինչպես և Ի. Օրուն և Մինաս Վարդապետին ուղղած 1703 թ. մայիսի 27-ի իրենց նամակներում։

Մելիքները հայտնում էին, որ Թուրք զորավար Սուլեյման Բաբան՝ (նույն ինքը՝ Սուլեյման բեկը) պատրաստվում է նվաճել Հայաստանն ու Վրաստանը, այդ մասին նա բանակցություններ է վարել Ղրիմի խանի և Թուրքիայի սուլթանի հետ՝ նրանց հավատացնելով, թե անհրաժեշտ է հայերին ու վրացիներին հպատակեցնել և նրանց հողերը նվաճել, մի բան, առանց որի Թուրքիայի համար շահական Պարսկաստանի կողմից սպառնացող վտանգը կանխելն անհնարին է։ Հայ ազագանին հայտնում էր նաև, որ Սուլեյման Բաբան շահից պահանջել է Թավրիզը իրեն զիջել և որ այդ կարող է պատերազմի պատճառ դառնալ։ Ահա այսպիսի լուրջ սպառնալիքների առաջ էր կանգնած Անդրկովկասը։ Հասկանալի է, որ վերոհիշյալ ահազանգումները դիվանագիտական խորամանկություններ չէին, որոնց գիմում էին հայ գործիչները՝ նպատակ ունենալով արագացնել ռուսական արշավանքը։ Խոսքը Հայաստանի ու Վրաստանի վրա կախված նոր ավերիչ պատերազմի վտանգը կանխելու, Թուրքական նոր ագրեսիան կանխելու մասին էր, և ոչ թե Պարսկաստանի ներսում տեղի ունեցող ինչ-որ միջֆեոդալական կռիվների։

¹ ЦГАДА, фонд 110 (Сношения России с Грузией), дело 1703 г. № 2, л. 1—2.

² Բերենք համապատասխան հատվածներ հիշյալ փաստաթղթերից. «А дело, что баба Сулейман начал думать делать и желает, дабы армянскую и грузинскую землю покарил туркам. Вам Великому государю да будет ведомо... (Эзов, № 99, л. 158)։ Այս է վկայում նաև № 95 փաստաթուղթը. «А ныне мы слышали, что баба Сулейман, турчанин храбрый, был у хана Крымского и приехал суди просить у шаха город Тавриз славный. Причину даст начати войну на Персах; а хану и туркам сказал, что покамест не будет завладети грузинцов и армянов и их земель, не будет безопасны от шаха, а ныне время удобное их владети» Эзов, № 95, л. 152)։

Այդ է վկայում նաև 7—8 տարի հետո Իսրայել Օրու մի հաղորդումը, որի մասին Մինաս Վարդապետը խոսում է Մոսկվայի ղեսպանական ատյանում ու թարգմանում Օրու գրած նամակը¹։

Ուրեմն, XVIII դ. սկզբին Անդրկովկասի վրա դամոկլյան սրի նման կախված էր նոր պատերազմի վտանգը, հարցականի տակ էր դրված հայ և վրաց ժողովուրդների գոյությունը։ Այդ էր պատճառը, որ ազատագրական շարժման գործիչները նորից ու նորից բարձրացնում էին Ռուսաստանից օգնություն ստանալու հարցը՝ հայերին, վրացիներին, հույներին ու մյուս հպատակ ժողովուրդներին օտար լծից ու բնաջնջման վտանգից ազատելու համար։ Այդ գործին զինվորագրվել էին հայ մեծ հայրենասեր Ի. Օրին և նրա զինակից Մինաս Վարդապետը։ Այդ գործին եռանդուն օգնություն են ցույց տալիս ռուս գործիչները, մանավանդ Պետրոս Մեծի զինակից Ֆ. Ա. Գուսովին և ղեսպանական ատյանի պաշտոնյա-թարգմանիչ Ն. Սպաթարիոսը (1636—1708)²։ Ի դեմս Ն. Սպաթարիոսի (Միլեսկու) Ի. Օրին գտավ իրեն զաղափարակից մի գործչի, որը վաղուց ի վեր մտահոգված էր իր հայրենի Մոլդավիան թուրքական լծից ազատագրելու խնդրով։ Ժամանակի խոշոր գործիչ, զինական ու լեզվագետ Սպաթարիոսը թարգմանում էր լատիներեն, թուրքերեն և այլ լեզուներով գրված փաստաթղթերը (հավանաբար նաև լատերգում նշված տեղանունները)։ Հիմքեր կան ենթադրելու, որ ի դեմս Ն. Սպաթարիոսի Ի. Օրին գտավ ազատագրական համանման ձգտումներ փայփայող մի գործչի, որը բալկանյան և անդրկովկասյան ժողովուրդների փրկության միակ ճանապարհը փնտրում էր ռուսական պետության ակտիվ ու համարձակ քաղաքականության մեջ։ Պատահական չէ, որ առաջին իսկ հանդիպումից հետո ղեռնա 1701 թ. Սպաթարիոսը գրավեց Ի. Օրու ուշադրությունը և Օրին աշխուհետե ղեռնա ղեսպանական ատյանին՝ խնդրելով բանակցությունների համար թարգմանիչ նշանակել Նիկոլայ Սպաթարիոսին³։

Հասկանալի է, որ իր անկախությունը կորցրած երկրից փախած, փտարանդի այդ նշանավոր գործիչն ու զինականը համակիր պիտի լիներ օտար աշխարհներում ղեկերող ազատասենյ Ի. Օրուն և նրա ծրագրին։

Հայտնի է, որ հայ-հունական համագործակցության ձգտումները ավելի հին են, նրանք կային ավելի առաջ, քան ծնվել էին Ն. Սպաթարիոսն ու Ի. Օրին (էլ չենք խոսում նրա և Սպաթարիոսի մոսկովյան հանդիպման մասին)։

Այն, որ Մուլեյման բեկը թուրք զորավար էր, փորձում էր նվաճել Հայաստանն ու Վրաստանը, այլև թավրիզը որպես իրրե թե իր նախորդ՝ շահ Աբրահա Բ-ի ժառանգի տիրույթ, երևում է ղեռնա 1699 թ. սեպտեմբերի 28-ին Պֆալցի կուրֆյուրստին (կայսրընտիր իշխանին) Իսրայել Օրու հղած ֆրանսերեն գրությունից, որտեղ կարդում ենք. «Չորս թե հինգ տարի է, ինչ ազգով թուրք բմն Մուլեյման բեկ 5000 հոգով եկավ Թավրիզին տեր դառնալու...» (Эзов, № 3)։

Հավանորեն նույն Մուլեյման Բաբային է վերաբերում Իսահակ վարդապետի ժամանակագրության մեջ տեղ գտած հետևյալ վկայությունը. «Թվին ՌՃԾԴ (1705) Մուլեյման պեկն զփորր Մահմատ պեկն վերի բերդն սպանեց և ինքն զափանմիչ եղև Զ (6) ամիս է (39) հոգով» (Վ. Ա. Հ ա կ ո Ր Յ ա ն, Մանր ժամանակագրություններ, հատ. I, Երևան, 1951, էջ 304)։

Ի. Օրին գրել է՝ «когда князь баба Сулейман воевался с персидским шахом и одолел его, и шах персидской против его силы не имел, но послал с великими дарами к султану турецкому, чтобы возможно было о той между ними учинившейся ссоре ему донести чрез своего посла, и султан Турецкой для любви велел пашам арапским итти на помощь к шаху противу бабы Сулеймана... Но понеже у него (т. е. бабы Сулеймана.— В. В.) силы не стало, пошел к Татарскому хану, и два намерения себе положе, остался там при хане. Первое мыслил, чтоб чрез ханово заступление у султана способ прощения вины своя получить, также и прежнюю свою честь воспринять. Второе думал, чтоб и чрез Черкасы к царскому величеству уйтить, чрез какое место будет возможно» (Эзов, № 171, էջ 263)։

2 Նիկոլայ Գավրիլովիչ Սպաթարին (ինչպես Մոսկվայում անվանում էին Նիկողայոս Սպաթարիոս Միլեսկուին) սերված էր մոլդավական բոյարական րնտանիքից։ Նա ստացել էր կրթություն և ծառայել էր մոլդավական գոսպոդարի (իշխանի) մոտ որպես կամավոր զորքերի հրամանատար՝ որպես «մեծ սպաթարիոս» (այստեղից էլ մնացել է նրա Սպաթարիոս անունը)։

³ Տե՛ս Эзов, № 43.

Ի. Օրու գրած լատիներեն գեկույցում (N 35) և նրա ուսական թարգմանության մեջ (N 36) հայտնվում է վաղուց ի վեր գոյություն ունեցող այն հույսը, որ հայերին, վրացիներին, հույներին և թուրքական լծի տակ տառապող մյուս ժողովուրդներին ազատագրելու է Ռուսաստանը, որի օգնությանն սպասում են նրանք 250 տարի շարունակ (այսինքն բյուզանդիայի անկումից հետո)։ Ս'վ բնագրում, և՛ թարգմանության մեջ ասված է, որ եթե ցարը կատարի այդ միսիան, ապա «միլիոնավոր հույներ, վրացիներ, հայեր և այլ բրիստոնյաներ աստճուն կազոթեն ... Պետրոսի համար»¹։

Այնուհետև, հայտնի է, որ քննվող նամակը գեղարվեստական աստվան է հանձնված հուլիսի 11—14-ն ընկած ժամանակաշրջանում, այսինքն գրեթե այն օրերին, երբ Օրին գեո ոչ մի հանդիպում չէր ունեցել Սպաթարիոսի հետ՝ եթե չհաշվենք նույն հուլիսի 11-ին կայացած առաջին գրույցը Գուլիսի հետ, երբ Օրին առաջին անգամ բացեց իր Մոսկվա գալու գաղտնիքը։ Ի. Օրին իր գիվանդիությունը վարելիս առաջնորդվում էր հայ ժողովրդի շահերով ու ձրդատումներով, ինչպես և ուսական քաղաքականության լայնախոհ նկատառումներով։ Այս, իհարկե, չի նշանակում, թե Օրին չէր գնահատում և. Սպաթարիոսի գերը և չէր փորձում նրա հետ գործակցել²։ Ընդհակառակը, Օրին ձգտում էր միավորել ուսաց, վրաց, հայ և այլ գործիչների ջանքերը՝ իր ծրագրի կենսագործման անհրաժեշտությունն ապացուցելու և գործը տեղից շարժելու համար, գիտենալով, որ դրանում հավասարապես շահագրգռված են նաև մյուս կողմերը³։

Դրանով են բացատրվում Ի. Օրու լայն հետաքրքրությունները և լավատեղյակությունը միջազգային դրության վերաբերյալ։ Օրին բաջ գիտակցում էր, որ Հայաստանի ազատագրության գործը անմիջականորեն առնչվում է ոչ միայն ուս-պարսկական ու ուս-թուրքական, այլև ուս-կիրովական փոխհարաբերությունների հետ։ Դրա համար պետք էր միավորել Անդրկովկասի ու բալկանյան ժողովուրդները ուժերը, դրա համար պետք էր այդ գործի շուրջն ստեղծել համակոսների և ակտիվ միջամտության պատրաստակամության միջոցառում։ Ի. Օրին ոչ միայն հասկանում էր այդ բոլորը, այլև հիշեցնում էր Պետրոս I-ին, որ Լեոպոլդ կայսրը և Պֆալցի կուրֆյուրստը պատրաստակամություն են հայտնել օգնել Հայաստանի ազատագրությանը, բայց այդ օգնության կարիքը կղզացվի միայն Ռուսաստանի միջազգային դրության բարդացման դեպքում։ Ահա թե ինչու Ի. Օրին խնդրում էր իրեն ուղարկել պապի ու կայսեր մոտ՝ նրանց աջարտավորությունների ու հովանավորության նոր հավաստումներ ստանալու համար։ Այսպիսով, նա ուզում էր եվրոպական պետությունների համակրանքը շրջել դեպի հայոց հարցի լուծումը, որպեսզի Ռուսաստանի և Պարսկաստանի միջև հնարավոր կոնֆլիկտի ընդլայնման դեպքում Պետրոս I-ի գործերը մեկուսացված չլինեն։

Ի. Օրին շատ ուշադիր հետևում էր դեպքերի զարգացմանը նաև բալկաններում, բաջ գիտակցելով, որ իր նախորդները կես դար առաջ հանդուգն փորձեր էին անում Հայաստանն ու Հունաստանը թուրքական տիրապետությունից ազատելու համար։ Պատահական չէ, որ նա ուսական կառավարությանը նախազգուշացնում էր ֆրանսիական դեսպանի կողմից Մուլդապիայում, Վալախիայում և այլուր հակառուսական բայրայիչ գործունեության մասին, մերկացնում նախապատրաստվող դավադրությունները Լեհաստանում, Ուկրաինայում (Մադեպա), Շվեդիայում։ Այսպես լավատեղյակ ու լայնախոհ գործիչը չէր կարող չհասկանալ թուրքական լծի տակ հեծող ժողովուրդների միավորման կարևոր նշանակությունը և այդ շփոթաբեր իր գիտումների մեջ։ Եթե առանձնապես շեշտվում էր հայ-վրաց համագործակցության գերը, ապա

¹ Տե՛ս ՅՅՕՅ, էջ 74 և 75։

² Տե՛ս ՅՅՕՅ, էջ 32։

³ ՄԼԻ կարծիքով և. Սպաթարիոսի եկամտամբ ձիշտ վերաբերմունք է ցուցաբերել Սիդուսին՝ 1966 թ. Բուխարեստում հրապարակած «Սպաթարիոս նիկոլայ Միլեսկուն և նրա գերը Պետրոս ՄԼԻ ու հայերի կապերի մեջ» հոդվածում. «Եթե ժամանակակից հայերը չկարողացան Երովստահատույց լինել Սպաթարիոսին, — գրում է Սիդուսին, — ապա ալժմ հայերը պետք է շնորհակալության խոսքով հիշեն նրան» («Studia et acta orientalia», II, Bucarest, 1960, էջ 216)։

⁴ Խոտագույն կոնսպիրացիայի պատճառով Ի. Օրին հնարավորություն չունեի ազատ հանդիպել ու գործակցել Արշիլի հետ։ Այդ է վկայում Օրու գիմումը՝ Արշիլի հետ հանդիպման իրավունք ստանալու մասին։ Այդ խիստ կոնսպիրացիայով է բացատրվում, ըստ Երևույթին, նաև հայ-վրաց համագործակցության մասին նյութերի պակասը։

դա միանգամայն հասկանալի պատճառով: Բայց գրեթե բոլոր փաստաթղթերում Ի. Օրին խոսում է նաև մյուս ժողովուրդների մասին՝ ոչ միշտ թվարկելով նրանց: Ինչպես հայտնի է, Եգյանի բերած N 35 փաստաթղթում հույները նշվում են, իսկ բազմաթիվ այլ փաստաթղթերում՝ հույներն ու Հունաստանը չկան և դա հասկանալի է, քանի որ Ի. Օրին և Արշիլը առաջին հերթին իրենց երկրների ազատագրության մարտիկներն էին և պայքարում էին իրենց ազգային նպատակների համար: Պետրոս Մեծը նույնպես հակված էր առաջին հերթին նվաճել Անդրկովկասն ու Սև ծովը՝ Թուրքիայի ագրեսիան կանխելու և արևելյան քաղաքականության վստահելի պլան-դարմ ստեղծելու համար: Ահա թե ինչու Մոսկվայում այդքան լուրջ ուշադրություն էր դարձվում անդրկովկասյան գործերին՝ Օրինի և Արշիլի դիմումներին, հետախուզական տեղեկությունները հավաքմանն ու քարտեզներ կազմելուն: Լեյս տեսակետից պատահական չէ, որ Բոլովինը գիմում էր Արշիլին և հիշեցնում Վրաստանի բարձրագույն կազմելու և ներկայացնելու անհրաժեշտության մասին: 1703 թ. հունիսի 2-ին Գոլովինին հղած իր նամակում Արշիլը հայտնում է, որ ինչպես խոստացել է նախորդ գրության մեջ, շուտով քարտեզը կավարտի և նրան կուղարկի¹:

1703 թ. օգոստոսի 12 թվակիր նամակում նա Գոլովինին հայտնում է, որ քարտեզն արդեն ավարտված է և խնդրում է հաղորդել, թե ի՞նչ ձևով և ուր պետք է ուղարկել այն²: Այդ ժամանակ Պետրոսը և Գոլովինը Մոսկվայում չէին: Մեզ չհաջողվեց գտնել Արշիլի ներկայացրած քարտեզը, չկարողացանք պարզել նաև, թե արդյոք Գոլովինն ստացել է քարտեզը, Ե՞րբ և որտե՞ղ: Սակայն պարզ է, որ այն պետք է ուսումնական կառավարության ղեկավարին հասներ 1703 թ. աշնանը, այսինքն այն ժամանակ, երբ ստացվելու էր նաև Ի. Օրին կողմից ներկայացված քարտեզ-գծագիրը:

Ի. Օրին 1703 թ. նոյեմբերի 15-ի նամակում ակնարկված գծագիրը՝ Մոսկվայի հին ակտերի արխիվի 192-րդ ֆոնդի 28 գործում, № 28-ի տակ պահվող մինչև այժմ անհայտ ու անտիպ մնացած քարտեզն է: Երա ձեռագիր գունավոր ու նկարազարդ մի քարտեզ է, որն իր ճշգրտությամբ, կատարման բարձր արվեստով ու ճաշակով զգալիորեն տարբերվում է ժամանակակից այլ քարտեզներից: Գծագիր-քարտեզը վերնագրված է. Королевство Армянское Большое и Малое, Мелетинское или Грузинское с королевствами Турскими во Азии со границы Руския, Персиккия, Арапския, Турецкая; границы в Европе Литванская, Великая Татария, Египетская и прочая. Издал Петр Симонер, лета 1703го.

Քարտեզի արևելյան (աջ) եզրի կենտրոնական մասում նկարազարդված պատվանդանի վրա ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով գրված է. «Նորին մեծությանը՝ ցարին է հանձնված՝ նրա ամենախոնարհ և ամենահավատարիմ ծառա Իսրայել Օրին կողմից 1703 թվին»: Presentee a sa Maeste la Grand Cecar par son tres humble, tres obeissant et tres fidel serviteur Ysrael Ori. Con de grace 1703.

Поднесено, ему Царскому величеству чрез его нижайшего и вернейшаго раба Исраила Ориа. Лета спасителя 1703.

Քարտեզը բավական մեծ է. երկարությունն է 82 սմ (թղթինը՝ 85), բարձրությունը՝ 50,5 սմ (թղթինը՝ 66): Այն բնագրվում է Անդրկովկասը, պատմական Հայաստանը և նրանց սահմանակից երկրների մերձավոր տերիտորիաները, բնդ որում արևմուտքում՝ Լեհաստանի, Սիկրաինայի, Մոլդավիայի, Կանդիայի և Հարավ-Արևելյան Աֆրիկայի հողերը, հյուսիսում՝ Ազովից սկսած մինչև Աստրախանի և Բուխարայի հողերը, արևելքում՝ թաթարական հողերից մինչև Պարսկաստանի հարավային շրջանները, իսկ հարավում՝ բնդհուպ մինչև Կարմիր ծովի հյուսիսային մասը և Պարսկական ծոցը: Այս հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ Օրին ձգտել է քարտեզում բնագրել հնարավոր ուսումնական կոնֆլիկտի ողջ թատերաբեմը, քանի որ ռուսական արշավանքը կարող էր համապատասխան ունեցիկ առաջացնել սահմանակից երկրներում, երբ անհրաժեշտ կլինեին կոնկրետ աշխարհագրական պատկերացումներ ունենալ նաև այդ շրջանների վերաբերյալ:

Քարտեզը գունավոր է, գծված է մեծ խնամքով, ունի աստիճանացանց: Տեղանունները գրված են ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով, պարզ են ու բնթևունի:

Քարտեզի հարավային (ներքին) եզրի կենտրոնում տրված է մասշտաբը՝ ըստ պարսկական ու ռուսական մղոնների և օրաշափերի:

¹ ЦГАДА, ф. 110 (Сношения России с Грузией), 1703 թ., գործ. № 2, թ. 10: Նույն տեղում, թ. 12ա:

² Պետք է հիշել, որ XVIII դարի սկզբում մոսկովյան մղոնը հավասար էր 700 սաժենի՝ մոտ 1,5 կիլոմետրի, իսկ պարսկական մղոնը՝ մոտ 2 կիլոմետրի: Համապատասխանորեն օրա-

Քարտեզի արևելյան եզրի կենտրոնում բավական նուրբ ու ճաշակով ներկայացված է պատերազմից հաղթանակով վերադարձած մարտիկի հանդիսումը՝ հավանաբար մայր հայրենիքը խորհրդանշող և նրան գուրդուրանքով ընդունող կնոջ հետ. արծվագլուխ թևավոր առյուծը ներկայացնում է ազատագրված Հայաստանի խորհրդանիշը՝ թագը:

Այս քարտեզը (ինչպես և XVIII դ. առաջին բառորդի անթիվ փաստաթղթերը) նորից ու նորից հաստատում է այն, որ Հայաստանի ու Վրաստանի ազատագրության գործը դարձել էր Երակարգի հարց, որ այդ ծավալվող ժողովրդական շարժումը կապված էր Ռուսաստանի անմիջական դիվանագիտական ու ռազմական օգնության հետ:

Ռուսական պետության հզորացումը Պետրոս Մեծի օրոք, նրա ակտիվ արևելյան քաղաքականությունը հայ և վրաց ժողովուրդների մեջ ուժեղացնում էր ռուսական պրոտեկտորատի տակ իրենց պետականության վերականգնման հույսերը: Թուրք-պարսկական բռնապետական լծի ծանրացման սոցիալական, ազգային ու կրոնական ճնշումների ուժեղացման պայմաններում ազատագրական ծրագրի հանդես գալը մեծ ու հուսալից իրադարձություն էր XVIII դ. սկզբին: Վաղուց ի վեր կարծես մեռացված էր Հայաստան անունն անգամ... և ահա Բ. Օրու ծրագրի հետ մեկտեղ հանդես է գալիս այս քարտեզը, որը հանձնվում է մեծ ռուսական պետության ղեկավարին՝ կյանքի ու իրավունքի համար պայքարող ժողովրդին օգնություն հասցնելու համար:

Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ

НОВОНАЙДЕННАЯ КАРТА, ПРЕДСТАВЛЕННАЯ ПЕТРУ I ИСРАЕЛОМ ОРИ

В. К. ВОСКАНЯН

(Р е з ю м е)

В Центральном государственном архиве древних актов (ЦГАДА) бережно хранятся редчайшие и ценнейшие коллекции документов по истории народов Советского Союза.

В фонде № 192, в деле 28, сохранилась рукописная карта Закавказья и сопредельных стран, составленная в 1703 г. и представленная Петру I виднейшим деятелем армянского освободительного движения Исраелом Ори. По всей вероятности, эта карта была составлена по требованию Петра I. Аналогичное требование было предъявлено также царю Арчилу Вахтанговичу, крупнейшему деятелю грузинского освободительного движения того времени. Арчил в своем письме к президенту посольских дел Ф. А. Головкину ярко обрисовывает положение в Грузии, выражая уверенность, что появление небольшого русского войска поднимет грузинский народ, и турецко-персидское иго будет свергнуто. В этом же письме он обещает вскоре составить карту Грузии. По письмам Арчила видно, что карта была составлена. Мы не смогли обнаружить этой карты, но документы Грузинского фонда ЦГАДА, как и документы Армянского фонда, показывают, что борцы за освобождение Грузии и Армении давали аналогичные характеристики положению Закавказья, находившегося под властью Турции и Персии, предлагали те же способы освобождения народов из-под ига деспотического владычества восточных сатрапий.

В те мрачные времена, когда в течение веков не было армянской государственности, появление даже одной только карты «Королевство Армянское Большое и Малое, Мелитинское или Грузинское...», переданной Петру I с целью получить помощь русского государства, отражало волю народов Закавказья обрести свою свободу.

Հափր պետք է հավասար լինէր 65—70 կիլոմետրի (հետիոտներ, իհարկէ, այդքան անցնել անկարող էր, նկատի է ունեցած հեծյալի օրաճանապարհը):

1 Հիշյալ և այլ ռազմաթիվ ու բազմազան վկայությունները գալիս են հերքելու արևմտաեվրոպական որոշ արխիվներում (և մասնավորապես Հռոմի «Պրոպագանդայի խորհրդի») կուսակված ճիգվիտական զեկուլցներում առաջ քաշված բանասարկություններն ու զրպարտությունները Բ. Օրու և հայ ազատագրական շարժման, նրա ռուսական կողմնորոշման մասին: Փաստերի լեզուն առավել պերճախոս է:



Դրա մասն Եզրին՝ Վարդի Օհրեան:

Շնորհակալ լինելով Ձեր հարկի քանակի
հետևանքով հաստատված և քանակի մասին
նա մեզ հետևող լինելով:

Ձեր մասին հարկի լինելով Ձեր հարկի
մասին հետևող լինելով Ձեր հարկի:

Ձեր մասին հարկի լինելով Ձեր հարկի
մասին հետևող լինելով Ձեր հարկի:

Ձեր մասին հարկի լինելով Ձեր հարկի
մասին հետևող լինելով Ձեր հարկի:

Во пів прерітні, ни Євнато владіца Гургина нѣ
но вѣт Пращацнмъ, доомъ хѣтмса рѣдѣмъ.
Сѣ по Пріо нѣ хѣтмъ, нѣ хѣтѣ, хѣтми вѣа
дѣтѣ Нѣмолѣи Дѣмѣмъ, вѣдѣмъмъмъ 10 вѣтмъ.
Сѣ юдѣа нѣмъ (хѣт по нѣт тѣрѣмъ) хѣтмъ Сѣтѣмъ
тѣрѣмъмъ нѣ рѣмѣдѣмъмъ вѣтмъ нѣ сѣвѣ вѣтмъ нѣ
нѣтѣмъ дѣмъмъмъ вѣтмъмъ вѣтмъ, на вѣт Пѣсѣмъмъ
вѣхѣмъмъ, тѣмъ нѣ вѣтмъ. Сѣ по вѣтѣмъ вѣтмъ
вѣхѣмъмъ нѣ вѣтмъ нѣ вѣтмъ, сѣ тѣрѣмъ вѣтмъмъ
тѣрѣмъмъ нѣ фортѣмъмъ мѣтмъ на сѣрѣмъ тѣмъмъмъ вѣтмъ,
вѣтѣмъ вѣтмъмъ тѣрѣмъ по хѣтѣмъмъмъ мѣтмъ нѣ вѣтмъ на
тѣрѣмъ нѣ вѣтмъ нѣтѣмъмъмъ. Сѣтѣмъмъ вѣтмъмъ
мѣтмъ, нѣ тѣмъ нѣ вѣтмъ, сѣ тѣмъмъ хѣтѣмъмъ. Хѣтѣмъ нѣ,
Омѣтѣмъ вѣтмъмъ фѣтѣмъмъ на тѣрѣмъмъ хѣтѣмъмъ
нѣтѣмъмъ Сѣтѣмъмъ фортѣмъмъ, сѣ нѣтѣмъмъ нѣтмъ
вѣтѣмъмъ вѣтѣмъмъмъ нѣтѣмъмъ вѣтѣмъмъ,
вѣтѣмъмъ вѣтѣмъмъмъ прѣтѣмъмъ вѣтѣмъмъ,
нѣтѣмъмъ вѣтѣмъмъ тѣмъмъмъ вѣтѣмъмъ вѣтѣмъмъмъ
мѣтѣмъмъ вѣтѣмъмъмъ вѣтѣмъмъ, вѣтѣмъмъ вѣтѣмъмъ.

Վրաց Թագավոր Արշիլի նամակի ֆոտոպատճենը (էջ 2)

